ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2026-1-5-Ա

ք. Երևան 12.03.2026թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2026 թվականի մարտի 12-ի նիստում քննարկեց 2025 թվականի մարտի 12-ին արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված՝ «LUCIANO SOPRANI S.r.l.» ընկերության (Via Morosini, 30 I-20135 MILANO, IT) «SOLO SOPRANI» (IR1044521) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
Հայտում նշված՝ 09-րդ և 25-րդ դասերի ապրանքների համար հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում միջազգային գրանցման հիման վրա պահպանվող՝ 09-րդ դասի նույնատիպ ապրանքների համար «SOLO» (JSC “Bank of Georgia”, 29a, Gagarin Street 0160 Tbilisi (GE) IR 1484647) և 25-րդ դասի նույնատիպ ապրանքների համար «Sopranos» (Home Box Office, Inc, 30 Hudson Yards New York NY 10001 (US), IR 1148161) համակցված ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 119-րդ կետի 2-րդ ենթակետի, 122-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն բառային ապրանքային նշաններին նման կարող են համարվել համակցված ապրանքային նշանները, որոնց մեջ ընդգրկված են բառային տարրեր: Տվյալ դեպքում համեմատվող նիշերն ունեն ձայնային նմանություն, որը որոշվել է նիշերի մաս կազմող

«SOLO» բառային տարրով և նիշերի համընկնող մասերի բնույթով՝ SOPRANI և SOPRANOS:

Կոլեգիայի նախագահը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները այն մասին, որ հայտատուն փոփոխություն է ներկայացրել միջազգային բյուրո սահմանափակելով ապրանքների և ծառայությունների ցանկը: Արդյունքում ներկայացված ապրանքային նշանի և հակադրվող ապրանքային նշանների ապրանքների և ծառայությունների ցանկը նույնական կամ նույնատիպ ապրանքներ չունեն, ինչը հիմք է տալիս ներկայացված ապրանքային նշանը գրանցելու համար:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Բողոքարկողի ներկայացուցիչը նույնպես համաձայն էր:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված «LUCIANO SOPRANI S.r.l.» ընկերության «SOLO SOPRANI» (IR1044521) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը բավարարել, կրկնական փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչել և ապրանքային նշանը գրանցել:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ